

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԷ ՄԵՐ ԱՂՕԹՔՆԵՐԸ, ԵԹԷ ԻՐ ԿԱՄՔԻՆ ՀԱՄԱՉԱՅՆ ԵՆ

1. Իրիկունը, առտուն ու կեսօրը պիտի գանգատիմ ու հառաչեմ: Անիկա պիտի լսէ իմ ձայնս (Սաղմոս 55:17):

2. Զիս պիտի փնտոնեմ եւ գտնեմ, ձեր բոլոր սրտով պիտի խնդրեմ գիս ու ես ձեզի պիտի երեւիմ, կ'ըսէ Տէրը (Եր. 29:13):

3. Արդարները կ'աղաղակեն եւ Տէրը կը լսէ ու իրենց բոլոր մեղութիւններէն կը փրկէ գանոնք (Սաղմոս 34:17):

4. Համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ այն վստահութեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք կը լսէ մեզ (Ա. Յովհաննու 5:14):


5. Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտոնեցէ՛ք եւ պիտի գտնեմք, բախեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի (Մատթէոս 7:7):

6. Եթէ այդպէս է կը նշանակէ, թէ անոնք, որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին Օրէնքը գիս Քրիստոս Յիսուսի միացրնելով կենդանացուց եւ ազատեց մեզի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ Օրէնքը չի կրնար ընել մարդկային բնութեան տակ ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց՝ աշխարհ զրկելով իր Որդին...

Շարունակել կարգով (Հռոմայեցիներու 8): Ամէն օր կարդանք Աստուածաշունչը եւ ունենանք Հոգեւոր սնունդ:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՎՏԱՏՈՒՄ 2.- Պատրաստութիւն ընծաներուն Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Եկեղեցին՝ հաւատացեալներուն համախմբումը, աստուածային սիրոյ մէջ կը միաձուլուի, որովհետեւ Քրիստոս է, որ կը յայտնուի իր աստուածային փառքով եւ դպիրներ կը ներբողեն երկինքէն երկիր աղբերացող աստուածային սէրը. « Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, ինք՝ Աստուած՝ հոս բազմեցաւ, խաղաղութեան կանչը հնչեց, սուրբ ողջոյն տալ հրահանգեց:

Եկեղեցին մէկ անձ դարձաւ, համբոյրով՝ կապն ամրացաւ, թշնամութիւնը հեռացաւ, բոլորին սէր սփռուեցաւ:

Արդ, բոլորս մէկ բարձրաձայն օրհնութիւն տանք միաբերան՝ միասնաբար աստուածութեան, որուն սերովբէներ ներբող կու տան»:

Յիսուսի սերովբէներուն եւ քերովբէներուն օրհներգութեամբ է, որ կ'ուղուի եկեղեցին ...

Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ

ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 14 ՅՈՒԼԻՍ 2024 ԹԻՒ 28

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 3.16-4.1: Ա. Կր. 1.25-30: Մտթ. 18.10-14

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏՔՆՈՍԻ 18.10-13

Զգո՛յ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն ոեւէ մէկը: Գիտցէ՛ք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս, որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք, եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունիւնը ոչխարները լերան վրայ եւ չերթա՞ր փնտոնելու կորսուած ոչխարը: Այո, կ'երթայ: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէ՛ք, որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունիւնը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

Գառնուկդ գայլերուն ձեռքին մէջ՝ ինծի համար

Ես խաչին վրայ ձեռքերդ տարածեցի կարծելով, որ քեզ սպաննեցի, իսկ դուն տարածուած ձեռքերովդ գիս ընդունեցիր գիրկիդ մէջ: Ես գաւազանով գլուխիդ զարկի, իսկ դուն՝ պահապանը գլուխիս, օրհնութիւններ թափեցիր գլուխիս վրայ: Ինծի համար խաչին տակ կըքցար, որպէսզի մեղքի տակ կըքածս՝ ոտքի կանգնիմ: Ինծի համար խաչին վրայ գլուխդ խոնարհեցուցիր եւ ինծի նայեցար հաշտութիւն խնդրելով, իսկ ես երեսդ ի վեր պոռացի՝ խաչէն վար իջի՛ր եթէ երբեք Աստուծոյ Որդին ես: Ինծի համար Գառնուկդ՝ գայլերուն ձեռքին մէջ ինկար, որպէսզի Չարին ձեռքին մէջ ինկածս՝ փոխադրես երկնաւոր Զօր ձեռքին մէջ: Շնորհակալ եմ, Տէ՛ր Յիսուս, այդ փոխադրութեան համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՏՕՆ ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ

ՍԱՆԳՈՒԽՏ ԿՈՅՍԻ ՍԱՆԳՈՒԽՏ ԿՈՅՍ

Դուստրը՝ Սանատրուկ թագաւորին, որ աշակերտելով Թադէոս առաքեալին, իր հօրմէն գաղտնի ընդունած էր քրիստոնէութիւնը: Սանատրուկ, գայրանալով այս եղելութեան վրայ, հայրական ամէն ողորհիչ միջոցներ ի գուր գործադրելէ վերջ, անդրդուելի գտնելով իր աղջկան հաւատքը, հրամայեց անոր մահը: Արքայագն օրհորդը, որ իր սեռին պատկանող շատերու ալ դարձին, այսինքն՝ հոգւոց փրկութեան պատճառ եղած էր արդէն Հայաստանի մէջ, իբրեւ առաջին առաքելուհի Հայոց, եղաւ նաեւ առաջին վկայուհին, իր կուրծքէն ընդունելով նահատակող հարուածը: Ս. Թադէոս թաղեց անոր մարմինը թափուն տեղ մը: Քանի մը օր վերջ ինք եւս նահատակուեցաւ գլխատութեամբ՝ Սանատրուկի հրամանով: Երեք դարեր անյայտ մնաց անոնց գերեզմանները, մինչեւ Լուսաւորչի եւ թերեւս նոյնիսկ Թարգմանչաց օրը: Թէեւ այս մասին յիշատակութիւն կայ Մովսէս Խորենացիի պատմութեան մէջ, բայց աւելի նոյն կերպով նկարագրուած է ան ժամանակակիցէ մը, եւ անկէ անցած Յայսմաւորէի մէջ: Կիրակոս անուն միայնակեաց մը, որ կը բնակէր Թադէոսի եւ Սանդուխտի նահատակութեան վայրին մօտ՝ Սանատրուկ կոչուած լեռ մը, Արտագ գաւա-

ռի Շաւարշան դաշտէն ոչ հեռու, տեսիլքի մը մէջ տեսաւ ոսկի լուսաշող աթոռի վրայ բազմած մէկը, որ իր շուրջը ունէր հինգ մարդիկ, յետոյ բլուրին վրայ երեւցաւ արեւու պէս պայծառ ոսկեհուռ զգեստներ հագած թագաւորացն աղջիկ մը, որ գլխուն վրայ հրաշագեղ պսակ մը՝ եկաւ աթոռին առջեւ: Յետոյ սփանջելի կերպարանով մարդ մը յայտնեց միայնակեացին, թէ լոյսը՝ Ս. Հոգւոյն շնորհքն է, աթոռին վրայինը՝ Թադէոս առաքեալն է, աղջիկը՝ Սանդուխտ կոյսն է, իսկ աթոռին շուրջինները՝ առաքեալին աշակերտներն են: Երկու օր վերջ, երկրորդ տեսիլքի մը մէջ առաքեալը, կոյսը եւ միւսները միայնակեացին կը մատնանշէին իրենց գերեզմանները: Այսպիսով գերեզմանները փորուելով բացուեցան եւ գտնուեցան նշխարները, որոնց շուրջը խոնուեցաւ ժողովուրդին երկիւղածութիւնը:

ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ՍԱՆԳՈՒԽՏ ԿՈՅՍԻ ՏՕՆԸ ԿԸ ՉՈՒԳԱԳԻՊԻ ՇԱՔԱԹ՝ 13 ՅՈՒՆԻՍ, 2024-ԻՆ

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ Ձեռնով Կրնամ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Նախ՝ ողորմած ու զթած պէտք է ըլլաս եւ երբ խեղճ աղքատները տեսնես, պիտի փորձես կարելիութեանդ սահմանին մէջ անոնց օգնել, որպէսզի արժանի ըլլաս Քրիստոսի երանութեան. «Երանի՛ր ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծոյն ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս 5:7): Երկրորդ՝ պահեցողութիւն պիտի ընես:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԵՐԲ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆԸ Կ՛ՈՒԶԷ ՄԵՉ ՊԱՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ Է

Պօղոս առաքեալ կը հաստատէ, որ մենք Աստուծոյ գործակիցներ ենք (Ա.Կր. 3:9): «Գործակից» բառը ցոյց կուտայ գործի մը կատարումը երկու անձերու կողմէ: Ճիշդ է, որ ջուրը գինիի վերածելը Յիսուսի հրամանով եղաւ, բայց չմոռնանք որ այդ ջուրը լեցնողները՝ սպասաւորները իրենք եղան: Յիսուս կրնայ ամէն բան ընել առանց մեզի, բայց չ'ընէր, ոչ թէ որովհետեւ չի կրնար, այլ որովհետեւ չ'ուզէր, եւ որովհետեւ կը սիրէ մեզ, եւ մեզ իրեն գործակից կ'ուզէ տեսնել: Ս. Օգոստինոս կ'ըսէ. «Յիսուս կրնար կարասները ջուրով լեցնել եւ ապա զանոնք գինիի վերածել, բայց որովհետեւ կը սիրէ մեզ, ուզէր որ մենք ալ այդ գործին մէջ մեր բաժինը բերենք»: Քանի կրնանք կարասները ջուրով լեցնել, ընենք ինչ որ կրնանք, եւ ինք կ'ընէ ինչ որ չենք կրնար մենք ընել:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Աստուած կը սիրէ մեզ եւ կ'ուզէ պատուել մեզ: Աստուծոյ հետ գործակցիլը մեզի համար պատիւ մըն է, ահա թէ ինչու ան մեզմէ գործակցութիւն կը պահանջէ: ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ
ՀԶՕՐ ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԷՍ...

ԵԹԷ ՍԻՐՏԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՆՈՒԷՊ ԵՐԱՍԱԿԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ Է ԵՒ Կ՛ՈՒԶԷՍ ՉԻՆՔ ԳՈՒՂԱՐԵՆԵԼ, ԿԱՐԳԱ՛ ՍԱՂՄՈՍ 30

Կը փառաբանենք քեզ, Տէ՛ր, որովհետեւ զիս ազատեցիր եւ թոյլ չտուիր, որ թշնամիներս խնդան իմ վրաս: Տէ՛ր իմ Աստուածս, քեզ օգնութեան կանչեցի եւ դուն զիս բժշկեցիր:

Չիս մահուրնէ ետ կեանքի բերիր: Դուն Տէ՛ր, քու հաճութեամբդ, երբ մահուան փոսը կ'իջնէի:

Տիրոջ ներքող երգեցէք, դուք՝ անոր հաւատարիմներ. գոհաբանեցէք անոր սուրբ անունը: Միայն վայրկեան մը կը տեսն անոր սաստիկ բարկութիւնը, մինչդեռ անոր հաճութիւնը ամբողջ կեանք մը կը տեսն, ճիշդ ինչպէս, որ իրիկուան հետ լացն ու արցունքը կը դադրին եւ առաւօտը կը բացուի ուրախութեամբ: Լաւ օրերուս կը խորհէի, թէ որեւէ բան չի կրնար զիս սասանել: Դուն է որ, Տէ՛ր, հաճութեամբդ զիս լերան պէս անշարժ ըրիր. հագիւ երեսդ դարձուցիր՝ ահա խոռվի մատնուեցայ:

Տէ՛ր, կ'աղաչե՛մ, կը պաղատիմ, Տէ՛ր: Ի՞նչ կը շահիս իմ մահովս, եթէ գերեզման իջնեմ: Միթէ փոշի դառնալէ ետք կրնա՞մ քեզ գոհաբանել կամ կրնա՞մ պատմել հաւատարմութիւնդ:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՆՔ